ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1112-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ճամբարակ համայնքի ղեկավար Վ. Ադամյանս քննելով Սամվել Գորոյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ 03.08.2026թ. հարուցված վարչական վարույթի նյութերը՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Աղթամար» տեղամասուի 4-րդ պահաբաժնի տարածքում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա թվով 1 հատ մետաղական տնակի և թվով 2 հատ քարե շինությունների ինքնակամ կառուցելու վերաբերյալ և նկատի ունենալով, որ 2026 թվականի օգոստոսի 13-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում նշանակված վարչական վարույթի լսումներին պատշաճ ծանուցված լինելով Սամվել Գորոյանը չի ներկայացել վարույթի լսումներին, իսկ նախքան վարչական ակտ ընդունելը վարչական մարմինը անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար, ուստի ղեկավարվելով ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սամվել Գորոյանի կողմից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ «Աղթամար» տեղամասուի 4-րդ պահաբաժնի տարածքում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա թվով 1 հատ մետաղական տնակի և թվով 2 հատ քարե շինությունների ինքնակամ կառուցելու փաստի առթիվ 03.08.2026թ. հարուցված վարչական վարույթը կասեցնել, մինչև դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալը, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60-րդ օրը լրանալը:
2. Վարչական վարույթի կասեցման մասին ծանուցել վարույթի մասնակիցներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 03
ք. Ճամբարակ